

**«Հայաստանի Հանրապետության կառավարության  
2018 թվականի մարտի 15-ի N 256-Ն և 2014  
թվականի դեկտեմբերի 11-ի N 1395-Ն որոշման մեջ  
փոփոխություններ կատարելու մասին»  
կառավարության որոշման նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**«\_\_» \_\_\_\_\_ 2019թ. N \_\_\_\_-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ  
15-Ի N 256-Ն ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1395-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի  
մարտի 15-ի «**Հայաստանի Հանրապետության դատախազների  
մշտական բնակության վայրից դուրս գործուղելիս բնակելի  
տարածությամբ ապահովելու անհնարինության դեպքում դրամական  
փոխհատուցում տալու կարգը և չափը սահմանելու մասին**» N 256-Ն  
որոշման հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Անհրաժեշտության դեպքում, պայմանավորված դատախազին իր  
բնակության վայրից 30 կմ և ավելի հեռավորությամբ վայրում  
«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով  
սահմանված կարգով նշանակելիս կամ գործուղելիս բնակելի տարածությամբ  
ապահովելու անհնարինությամբ, նրան վճարվում է դրամական  
փոխհատուցում բնակելի տարածության վարձակալության դիմաց՝ փաստացի  
վճարված գումարի չափով, բայց ոչ ավելի, քան՝

Բնակավայրի անվանումը

Ընտանիքի (երեխաները, ամուսինները, ծնողները, տ

անդամների թիվը

մինչև 4 անդամ

4 և ավելի անդամ

Երևան քաղաքում

65000 դրամ

85000 դրամ

Այլ քաղաքներում

38000 դրամ

50000 դրամ

Այլ բնակավայրերում

20000 դրամ

25000 դրամ

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի «**Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողին այլ վայր ծառայության նշանակմամբ կամ ծառայության գործուղելիս բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինության դեպքում դրամական փոխհատուցում տալու կարգը և չափը սահմանելու մասին**» N 1395-Ն որոշման հավելվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Անհրաժեշտության դեպքում, պայմանավորված քննչական կոմիտեի ծառայողին իր բնակության վայրից 30 կմ և ավելի հեռավորությամբ վայրում ծառայության նշանակելիս կամ գործուղելիս բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինությամբ, նրան վճարվում է դրամական փոխհատուցում բնակելի տարածության վարձակալության դիմաց՝ փաստացի վճարված գումարի չափով, բայց ոչ ավելի, քան՝

Բնակավայրի անվանումը	Ընտանիքի (երեխաները, ամուսինները, ծնողները, տանտերները, անդամների թիվը մինչև 4 անդամ	4 և ավելի անդամ
Երևան քաղաքում	65000 դրամ	85000 դրամ
Այլ քաղաքներում	38000 դրամ	50000 դրամ
Այլ բնակավայրերում	20000 դրամ	25000 դրամ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: